

ԿԵՆՏՐԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈւՏԴ 592/599

Հ. Զ. Գրիգորյան

Հայաստանի սաղմոնային ձկների հայերեն անվանումների անճշտության մասին

(Ներկայացված է ակադեմիկոս Ս.Հ. Մովսիսյանի կողմից 18/II 2005)

Կենդանիներին ճիշտ անվանելն ունի կարևոր նշանակություն նրանց ճանաչելու, ուսումնասիրելու և բնապահպանական, կենսացենոլոգիական ու էկոլոգիական մի շարք խնդիրներ լուծելու հարցում: Կենդանիների անվանումների ճիշտ չիմանալը, անշուշտ, խոչընդոտում է նրանց բուծման, կլիմայավարժեցման հարցերը լուծելիս, քանի որ յուրաքանչյուր տեսակ ունի կենսաբանական, ֆենոլոգիական իր առանձնահատկությունները:

Հաճախ դասագրքերում, մասնագիտական գրականության մեջ, ակնարկներում, գիտական հոդվածներում, բառարաններում միևնույն կենդանուն տարբեր անվանումներ են տրվում կամ տարբեր տեսակներին և կարգերին պատկանող կենդանիներին՝ նույն անվանումը: Այս հանգամանքը դժվարություն է առաջացնում ուսանողների, աշակերտների, ուսուցիչների և դասախոսների, թարգմանիչների, լրագրողների, ինչպես նաև բնասերների համար:

Հայաստանն իր յուրահատուկ ֆաունայով Կովկասի ամենահետաքրքիր տարածքներից մեկն է: Լինելով լեռնային երկիր և ունենալով լանդշաֆտների ցայտուն արտահայտված բարձունքային գոտիականություն՝ Հայաստանը բնորոշվում է իր ֆաունայի տեսակների բազմազանությամբ և էնդեմիզմով: Դա վերաբերում է նաև ձկներին:

Ներկայումս Հայաստանում տարածված է ձկների 39 տեսակ և տարատեսակ [1], որոնցից մեծ հետաքրքրություն է ներկայացնում սաղմոնակերպերի կարգը: Այս կարգի մեջ մտնում են՝ Սևանի իշխանը, գետային ֆորելը (կարմրախայտ), Կասպյան սաղմոնը, ծիածանային ֆորելը, Սևանի սիգր: Նշված ձկներից *Սևանի իշխանը* հայտնի է, որպես Հայաստանի էնդեմիկ տեսակ: Այս ձկանը ճանաչելը և չժողովելը մյուս տեսակների հետ մեր՝ հայերիս պարտականությունն է: Մինչդեռ ոչ միայն ժողովուրդը, այլև երբեմն հայ գրականության մեջ, այլ տեսակի ձկանը նույնպես իշխան են անվանում: Այսպես,

սաղմոնայինների ընտանիքին պատկանող радужная форель ձուկը (*Oncorhynchus mykiss*) թարգմանված է *ծիածանագույն իշխան* [2], այն դեպքում, երբ *իշխանը* Սևանա լճի էնդեմիկ ձուկ է և տարբերվում է բոլոր սաղմոններից: Այստեղ նա առաջացրել է 4 ռասա՝ ձմեռային իշխան, ամառային իշխան, գեղարքունի իշխան և բոջակ իշխան [3]: Մինչդեռ радужная форель ձուկը պատկանում է Խաղաղ օվկիանոսի սաղմոններին: Բնական պայմաններում այս ձուկն ապրում է Կամչատկայի ջրերում: Նրա իսկական հայրենիքը Այլասկայից մինչև Կալիֆոռնիայի ափերն են: Այս տեսակը հյուսիսամերիկյան պողպատագույն սաղմոնի (стальноголовый лосось, *Salmo gairdneri*) չգաղթող լճային ձկն է [15]: Հայաստան է ներմուծվել Վրաստանից, իսկ այնտեղ բերվել է Ռուսաստանից: Հետևաբար, այս ձկան հայերեն ճիշտ անվանումը պետք է լինի *ծիածանային ֆորել*: *Օիածանային* (այլ ոչ թե ծիածանագույն) է կոչվում կողքերով ձգվող ծիածանանման շերտի պատճառով [4]:

Գրականության մեջ, մեկ այլ տեղ [5,6], радужная форель ձուկը թարգմանված է ծիածանային կարմրախայտ: Այս ձկանը կարմրախայտ անվանելը նույնպես սխալ է, քանի որ *կարմրախայտ* է կոչվում միայն *գետային ֆորելը* (ручьевая форель, *Salmo trutta morpha fario*): Մյուս կողմից ручьевая форель, озерная форель ձկների տեսակները նույնպես թարգմանված են կարմրախայտ, ինչը շվարություն է առաջացնում [6]:

Երբեմն [7] կարմրախայտին անվանում են նաև իշխան կամ ծիածանային կարմրախայտ, ինչն իր հերթին, ինչպես արդեն ասվեց, радужная форель ձկան սխալ թարգմանությունն է:

Սաղմոնային ձկների անվանումների անճշտության հիմնական պատճառն այլ է, որ հայ-ռուսերեն բառարաններում [8, 9] իշխան ձուկը թարգմանված է форель, իսկ բացատրական [10, 11] և բոլոր ռուս-հայերեն բառարաններում [9, 12-14] форель բառը թարգմանված է իշխան, կարմրախայտ: Ըստ այդ գրականության, ստացվում է, որ աշխարհի բոլոր форель ձկները իշխաններ են:

Ֆորելները սաղմոնային ձկների (կոմժայի և մետաղագույն սաղմոնի) քաղցրահամ ջրերի չգաղթող ձկներն են, որոնք ապրում են տարբեր երկրների (Եվրոպայի, Փոքր և Միջին Ասիայի, Հյուսիսային Ամերիկայի, Աֆրիկայի) լեռնային արագահոս գետերում ու լճերում [15,16]: Հետևաբար, իշխանը (ամառային և ձմեռային), բոջակը, գեղարքունին, կարմրախայտը, Կլարկի սաղմոնը (ամերիկյան տեսակ է) և այլ չգաղթող սաղմոնները՝ ֆորելներ են: Այսպիսով, իշխանը ռուսերեն նույնպես պետք է կոչվի ишахан, իսկ ռուսերենից թարգմանելիս форель ձկները հայերեն պետք է անվանվեն ֆորելներ: Այսպես, ручьевая форель ձուկը հայերեն պետք է թարգմանվի *գետային ֆորել* կամ *կարմրախայտ*, озерная форель՝ *լճային ֆորել*, радужная форель՝ *ծիածանային ֆորել* և այլն:

Սևանա լիճը թափվող լեռնային գետերի սաղմոնային ձուկ է *ալաբալախը* (ըստ երևույթին, ներկայումս այդ ձուկն արդեն վերացել է): Մինչ այժմ ձկնաբանները չունեն մի ընդհանուր կարծիք այս ձկան ծագման վերաբերյալ: Ոմանք գտնում են, որ ալաբալախը գեղարքունի իշխանի գետային ձկն է, որն ամբողջ կյանքն անց է կացնում գետերում և շատ նման է գետային ֆորելին՝ կարմրախայտին [3,15,17]: Մյուս հեղինակների տվյալներով [18], ալաբալախը նույն կարմրախայտն է և նրա պոպուլյացիաներից մեկը:

Երբեմն գրականության մեջ իշխանին նաև *բախտակ* են անվանում: Ընդ որում, որոշ հեղինակներ [2,10,11] իշխանի 2 ռասաները անվանում են ամառային բախտակ և ձմեռային բախտակ, մյուսները [6,7] «բախտակ» բառը համարում են իշխան ձկան հոմանիշ անվանումը: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի I-ին հատորում [11] գրված է, որ բախտակը իշխան ձկան փոխակերպությունն է ձվածելիության շրջանում, իսկ նույն գրքի II-րդ հատորում բացատրված է, որ բախտակը իշխան ձկան տեսակ է: Իրականում *բախտակները* իշխանի սեռահասուն ձկներն են, այսինքն ձկան կյանքի մի փուլն են հանդիսանում [3, 11, 18]: Ինչպես ժողովրդախոսակցական լեզվում են ասում, իշխանները «բախտականում» են (բազմանում) կամ ձմռանը, կամ էլ ամռան ամիսներին: Այդ ժամանակ նրանք ենթարկվում են գույնի, մսի համի և այլ հատկանիշների փոփոխության: Բազմացման շրջանից դուրս սրանց ասում են իշխան: Հետևաբար, իշխանի այս ռասաների գիտական ճիշտ անվանումը պետք է լինի *ձմեռային իշխան, ամառային իշխան*: Այս դեպքում ռասաների հայերեն անվանումներից դուրս չի մղվի «իշխան» բառը և անվանումները կգրվեն այնպես, ինչպես ընդունված է լատիներենում՝ *Salmo ischchan ischchan* K. և *Salmo ischchan aestivalis* F.:

Այսպիսով, վերլուծելով Հայաստանի սաղմոնային ձկների հայերեն անվանումները, բացահայտվեցին ոչ ճիշտ թարգմանություններ և խառնաշփոթ վիճակ: Այս իրավիճակը շտկելու համար առաջարկում ենք սաղմոնայինների ընտանիքին պատկանող *форель* ձկներին հայերեն նույնպես անվանել *Ֆորել*: *Իշխան* ձուկը ռուսերեն պետք է կոչվի *ишхан* կամ *Севанская форель*:

Առաջարկում ենք այս և վերը նշված մյուս թարգմանությունները մոցնել բառարանների մեջ և այսուհետև գիտական հոդվածներում և գրքերում այդ ձևով օգտագործել:

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտ

А. Дж. Григорян

О неточностях армянских наименований лососевых рыб Армении

В армянском языке существует путаница в наименованиях животных, в частности, рыб, что затрудняет их распознавание, изучение и решение ряда экологических, биоэкологических и других вопросов.

В статье показана неточность при переводе на армянский язык названий лососевых рыб: ручьевая форель, озерная форель, радужная форель; уточнены названия четырех рас Севанской форели - *ишхана*. Исходя из того, что ишхан является эндемиком оз. Севан, недопустимо давать такое наименование какому-либо другому лососю.

H. J. Grigoryan

About Inexactitude in Denomination of Salmon Fishes of Armenia

There is a confusion in denomination of animals and particularly of fishes. This fact hampers their recognition, study and solving a number of ecological, biocenological and other problems. Incorrect translation of the names of salmon fishes - Stream Trout, Lake Trout, Rembow Trout - are shown in the article and made more exact. The names of 4 races of Sevan trout "Ishkhan" are made exact. Taking into account Lake Sevan, the inadmissibility of naming any other salmon "Ishkhan" is well - grounded.

Գրականություն

1. Gabrielyan B.K. - Naga. The Iclarm Quarterly (V. 24. N. 384) July-December. Malaysia. 2001. P. 23-29.
2. Հայաստանի կենսաբազմազանությունը: Առաջին ազգային զեկույց, Երևան, 1995:
3. Дадикян М. Г. - Рыбы Армении. Изд. АН АрмССР. Ереван. 1986.
4. Животный мир Белоруссии. - Рыбы. Энциклопедический справочник Минск. 1989.
5. Մանյան Վ. Հայաստանի կենդանական աշխարհը: Ձկներ: Երևան, Հայաստան, 1975:
6. Ղազարյան Լ. Ս. Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան: Ձկներ, Երևան, 2000:
7. Մաքրիսյան Ա.Ս. Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան: Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003:
8. Հայ-ռուսերեն բառարան: Գլխ. խմբ. Ե.Հ. Գալստյան, Երևան, 1987:
9. Ռուս-հայերեն բառարան, հայ-ռուսերեն բառարան: Կազմ. Պ.Ս. Բեդիրյան, Դ.Ե. Անմեդիկյան, Ջ.Ա. Ղարիբյան, Երևան, Հայաստան, 1987:
10. Մղայան Է.Բ. Արդի հայերեն բացատրական բառարան: Երևան, Հայաստան, 1976:
11. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հ. I, 1969; հ. II, 1972; հ. IV, 1980, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
12. Ղարիբյան Ա.Ս. Ռուս-հայերեն բառարան, Երևան, Հայաստան, 1977, 1982:
13. Ռուս-հայերեն նոր բառարան: Կազմ. Թ. Ավդալբեկյան, Պ. Սոտնիկյան, Ե. Տեր-Մինասյան, Վ. Փոթեյան, Երևան, Պետական հրատարակչություն, 1935:
14. Ռուս-հայերեն բառարան, Հ.4, գլխ. խմբ. Ա.Ս. Ղարիբյան, Երևան, 1958:
15. Жизнь животных. Т. 4. Под. ред. Т.С. Рассе. М. Просвещение. 1983.
16. Советский энциклопедический словарь. М. Сов. Энциклопедия. 1988.
17. Владимиров В.И. - Изв. АН АрмССР. Естеств. науки. 1944. N1-2. С. 145 -158.
18. Рухкян Р.Г. Кариология и происхождение форелей Закавказья. Изд. АН АрмССР. Ереван. 1989. 162 с.